Հաղթանակած գործ

ՀՀ ՊՆ պայմանագրային հիմունքներով ծառայող զինծառայողը ցանկացել է զորացրվել ՀՀ զինված ուժերի պահեստազոր՝ ուսումնական ծախսերը փոխհատուցելու պայմանով: ՀՀ Պաշտպանության նախարարությունը չցանկանալով զորացրել զինծառայողին արհեստական խոչընդոտ էր ստեղծել զինծառայողի համար՝ վերջինիցս պահանջելով ակնհայտ անհամաչափ և մեծ գումար: Զինծառայողը չունենալով այլ ելք դիմել էր իր իրավունքների դատական պաշտպանությանը, որն էլ ստանձնել էր փաստաբան Կարեն Հովհաննիսյանը (արտոնագիր 1212): **2014 թվականին հայցադիմում էր ներկայացվել դատարան ընդդեմ պաշտպանության նախարարության և ՀՀ վարչական դատարանի 2015թ. կայացված վճռով հայցը մերժվել էր: ՀՀ վարչական դատարանի վճիռը բողոքարկվել էր ՀՀ վարչական վերաքննիչ դատարան և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 2015թ. որոշմամբ բեկանվել և փոփոխվել էր դատական ակտը՝ ամբողջությամբ բավարարելով ներկայացված հայցադիմումը: Վերաքննիչ ատյանի որոշումը չէր բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:**

Արդյունքում զինծառայողը արձակվել էր զինված ուժերի պահեստազոր և որպես հաշվարկ հիմք էր ընդունվել վերջինիս ներկայացուցիչ փաստաբան Կարեն Հովհաննիսյանի կողմից ներկայացված հաշվարկը և զինծառայողը ձերբազատվել էր ՀՀ պաշտպանության նախարարության կողմից անհիմն հաշվարկված և որպես փոխհատուցման գումար առաջադրված ակնհայտ անհամաչափ գումարի վճարման պարտավորությունից և վերականգնվել էին զինծառայողի խախտված իրավունքները: